

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

**Ֆ/Ա Արտակ Հովհաննիսյանին**

Հարգելի Արտակ Հովհաննիսյան

<<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և Ֆ/Ա Արտակ Հովհաննիսյանի (այսուհետ՝ Կատարող) միջև 08.03.2022թ.-ին կնքված ԱԱԿ-ՄԱԾՁԲ-22/2 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Կատարողը պետք է մատուցեր Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծառայությունը, սակայն Կատարողը հուլիսի 18-ին ներկայացրել է դիմում համաձայն որի հրաժարվում է մատուցել ծառայությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով <<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն հարկադրված է 2022թ. հուլիսի 18-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Ֆ/Ա Արտակ Հովհաննիսյանի տվյալները՝ համապատասխան հիմքերով, պարտավորվում ենք ներկայացնել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

<<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի

տնօրենի պաշտոնակատար



Գ. Նիկողոսյան